Ղևոնդ Ալիշան

Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց

Մոգություն . մազդեզական աղանդ

Մեր հին հեղինակները և օտար գրիչները մեզ հայտնի են դարձնում այն, ինչը հայերս չաստվածների անուններով պաշտում էինք Քրիստոսից մի քնաի դար առաջ ու հետո: Բայց է՛լ ավելի առաջ մեր քիչ-շատ ընդունած երկու սկզբունքները (բարի և չարի) և կրակի աստվածության պաշտամունքը չեն բացատրել . հավանաբար այն ծավալվել էր նաև Հայաստանում, թեև ավելի նվազ չափով, քան Պարսկաստանում ու Մարաստանում, և հույների դիքերի ու պատամունքների փայլատակումից մարել կամ մթագնել էր: Այդպես էր և պարսիկների մոտ պարթևների թագավորության ժամանակաշրջանում և վերստին բոցկլտացել էր Սասանյանների օրոք 3-րդ դարում: Վերջիններս կամեցան այն արծածել նաև Հայաստանում, մինչդեռ մեր աղգակիցները քիչ ժամանակ անց, ամեն սուտ կրոն ու պաշտամունք թողնելով, դարձան քրիստոնեության: Եվ երբ մեկ ու կես դար անց Հազկերտն ու նրա նմանները ամենայն հնարքներով ջանացին հայոց կողմերում ատրուշաններ բորբոքել, իմացան, որ այնուհետ այնտեղ մեկ այլ, աներևույթ կրակ (Քրիստոսի հավատի և սիրո) ոչնչացնելու էր իրենց խավարաբորբ խարույկը:

Բնապաշտության առումով հիշեցնենք կրակի պաշտամունքը և Ագաթանգեղոսի՝ հին հայերին մոխրապաշտ կոչելը: Սակայն դրանով իմացանք նրանց՝ պարզապես բնության մեծամեծ երևույթների ու տարերքների պես կրակն էլ պաշտելը: Իսկ այստեղ հիշված կրկաը աստվածության կամ գերագույն Աստծու էական պատկերն էր՝ բազմապատիկ հավատքներով ու ավանդություններով

Յատուկ Պոէմ

հանդերձ, որոնց բովանդակած կրոնները կոչվել են պես-պես անուններով . ամենից ավելի ընդհանուր կրոն լինելով Պարսկաստանում՝ պարսկական դեն կրոնը հնարողի կամ ծավալողի անվամբ՝ զրադաշտական աղանդ, և իր պաշտամունքավարների առումով՝ մոգերի աղանդ կամ մոգության օրենք, ինչպես ասվում է մեր նախնիների գրքերում: Վերջինս պետք չէ շփոթել մոգ և մոգություն կոչվածի հետ, որով իմացվում է որևէ աղթարական և կախարդական հնարք:" Այս պարսից կրոնը առանձնահատուկ կերպով կոչվում է դենիմազդեզն՝ մազդեզական դեն, որովհետև մազտա-յազնա նշանակում է «որմզդապաշտ» կամ «աստվածապաշտ», ինչպես տավա-յազնա՝ «դիվապաշտ»:

Այս լայնածավալ կրոնը, որը հայերիս մեջ ջնջվեց քրիստոնեությամբ, մի հակառակ կերպով էլ իսլամական կրոնով ջնջվեց ուրիշ աշխարհներում, և այժմ մնում են սակավ և իրենց նախնիների ոչ կատարյալ ավանդություններով հետևողներ պարսից սահմաններում, ինչպես և Հայաստանին մերձակա Բաքվում, որտեղ կան կրակի ինքնավառ աղբյուրներ: Դրանք կան նաև Հնդկաստանում և կոչվում են Փարսիք և Կեպր:

5-րդ դարի կեսին Հայոց աշխարհում պարսիկների վերջին փորձը ոչ միայն մեր բարեպաշտների սիրտը բորբոքեց սիրո գերագույն հրով, այլև սրեց գիտունների գրիչը՝ հերքելու և խայտառակելու մոգերի բարբաջանքը: Մեր ամենաընտիր հեղինակները՝ Եզնիկը, Եղիշեն, Մովսեսը, Ղազարը, ու փոքր-ինչ էլ ուրիշ ոմանք մինչև իսկ այսօրվա վարժարանների աշակերտներին մասամբ են ճանաչելի դարձնում այս՝ քննության կարոտ թողնելով մյուս մասերը, որոնք արժանի համարեցինք ըստ կարելիության բովանդակել կամ համառոտել հետևյալ ծանոթությամբ՝ այլոց թողնելով պակասն ու սխալը լրացնելը կամ ընդարձակ ճառողների գրքերը փնտրելը, որ եթե մեզ համար մեր հին հայերի հավատքի պատճառով է հետաքրքրական, օտարենրի համար էլ հետաքրքրական է եղել կրոնի՝ «Ջանդ-Ավեստա» կամ «Ավեստա» և «Ջանդ» կոչված գրքերում եղած ընդարձակ վարդապետությունների պատճառով և նույնիսկ մոգ անվան պատճառով:

Անծանոթ է այս անվան ծագումը, որ, այսպես կարճ ու միավանկ, մի խոր հնություն է ցույց տալիս հայոց ուպարսից լեզուներում, որոնք գրում են մոկ կամ

մյոսկ, նաև մավ և մյուղ, նրանց գլխավոր մոգպետի անունն էլ, ըստ մեր հին գրիչների, գրում են մյուպետ կամ մովպետ: Արաբները մոգին կոչում են մաճյուս:

Ըստ որոշ գիտնականների՝ մոգ բառը ծագել է քաղդեերենից և նշանակում է «մտածող, նկատող»: Ըստ Փիլիսոփաների («Ապոլոնիոս Տիանացու վարքը»)՝ հին պարսիկները մոգ էին անավանում իրենց չաստվածներին, հետո անունն անցավ նրանց պաշտամունքավարներին: Մոգ անունը մ և բ կամ պ տառերի լծորդությամբ նույնանում է սկյութական և սլավոնական լեզուների բոգ և բագ աստվածային անունների հետ: Ոմանք էլ ստուգաբանում են ըստ մակա կամ մահա բառի, որ նշանակում է «մեծ», ինչպես լատիներեն majus-ը: Մոգ անվամբ հատուկ անձ, կարծում եմ, չի հիշատակվում, իսկ տեղանքի ու ազգի առնչությամբ նախ գտնում ենք մեր երկրում մի աշխարհ կամ նահանգ՝ երեք համանուն առանձին գավառներով, որ կորդվաց ու քաղդեացվոց սահմանակից Մոկաց աշխարհը և Առանձնակ Մոկքն է: Մինչ այժմ էլ կա մի վիճակ՝ Մոկս կամ Մեքս անվամբ, որով կոչվում է նաև գլխավոր ավանը: Հերոդոտոսը հիշատակում է մարերի երկրի Մոգ կամ Մագ գավառը, բայց գիտնականները այն համարում են ոչ թե տեղ, այլ մոգերի ու քահանաների դաս: Ըստ տեղանքի դիրքի՝ ոմանք (և ավելի՝ մեր հ. Ղուկաս Ինճիճյան հնախոսը) մոգության բուն սկզբնատեղի համարում են Մոկաց աշխարհը և նույնիսկ Քրիստոսի ծննդյանժամանակ արևելքից եկած մոգերին համարում են այս կողմից: Դրա համավստիքը չկա՝ բացի տեղանքի հարմարությունից (այդ տեղանքի հնագույն հիշատակողներ են հույն պատմիչներ Հեկատեոսն ու Հերոդոտոսը (III, 93. VII, 68), որոնք այն կոչում են Մուկ): Ս. Բարդուղիմեոս առաքյալի վկայաբանության մեջ մոգերի մի երկիր էլ հիշատակվում է Պարսկաստանում, ինչը երկբայելի է: իսկ աղթարքների մեջ հիշատակված մոգերի ազգը կոչվում է նաև խթայեցի, երկիրը՝ Խութայու երկիր, ինչը պատմիչների մոտ կոչվում է Խաթայի, որը Չինաստանին սահմանակից թուրք կամ թաթար ցեղ է:

Գրիգոր Աստվածաբանի գրքի մեկնիչը (Նոննոսը) ասում է. «Մոգքն՝ ազգաւ ի Գամրաց են, ուստի և Լերդահմայութիւնն լինի». գամիրքցիները (Հաբթեթյան Գոմերից) Առաջին Հայքի և Կապադովկիայի հին բնակիչներն են. սրանց մոգությունն էլ համարվում է «մակակոչութիւն բարեգործ դիւաց, առ ի բարւոյ իմիք հաստատութիւն»: Ընդհակառակը, պարսից մոգությունը չար դևերի

մակակոչություն է, որ կախարդություն է: Այս երկրում (Գամիրքում) կար Մոկիսոն անվամբ մի քաղաք (որ թվում է ներկայիս Գրշեհիրը), որը Հուստինիանոս կայսրը կարգեց Կապադովկիայի մայրաքաղաք, և որը հավանաբար մեր երկրի նման կոչվում էր Մոկս և հույների կողմից կոչվեց Մոգիսոս: Սրանք շատ հին ու մութ հիշատակումներ են:

Մենք հիշեցինք պարսկաստեն մոգության ծանոթագույն հեղինակին, որը սովորաբար համարվել է Զրադաշտը: Այս հռչակավոր անձը ճանաչվել է Քրիստոիսց վեց դար առաջ, բայց ներկայիս հնախույզները ընդունում են մի շատ ավելի հին Զրադաշտի, որն ապրել է Փրկչի թվականից 25 կամ 26, մինչև իսկ 30 դար առաջ: Իսկ հին պատմիչները, ըստ Պլինիոսի (XXX, 1), այդ թիվը կրկնապատկելով, դարձնում են 6000 տարի, ինչը մեր սովորական ժամանակագրությամբ անցնում է նաև Ադամի թվականից: Բայց ոմանք համարում են, թե սա Նոյ կամ Սեմ նահապետն է: Մեր պատմիչներն էլ հիշատակում են Շամիրամին և Արայի ժամանակակից մի Զրադաշտի՝ Փրկչի թվականից մոտ 2000 տարի առաջ (ըստ Սվիդասի՝ Տրոյական պատերազմից 500 տարի առաջ)՝ իբր բակտրիացիների թագավորի, որը, ասորեստանցիներին ու բաբելացիներին հակառակ, հանրեց մի աղանդ՝ Զրվանին կոչելով աստվածների հայր: Բայց այսպիսի զրույցները շատ անստույգ բաներ են, որքան էլ հավանական լինի, թե մի հին աղանդապետ եղել է մոգության վարդապետը, կամ այդպիսին են եղել այլևայլ անձինք, որոնց անուններն ու գործերը միավորվել են այդ Զրադաշտի մեջ, և շատ դարեր անց գրով ու խոսքով նման աղանդ է հրապարակ բելեր նոր և մեծ Զրադաշտը:

Արդ, սա ամենահավանական հաշվարկով ծնվել է փրկչական թվականից 600 տարի առաջ և մահացել է 522 թ. Ուրմիա քաղաքում: Մեր պատմիչներն այս վայրը հիշելիս գրեթե միշտ ավելացնում են «քաղաք Հայոց», որ նշանակում է՝ աղանդապետն էլ կարող էր լինել ինչպես հայ, այնպես էլ պարսիկ, մար կամ ասորի, ինչպես ասում են այլևայլ գրողներ: Բայց պարսիկները նրան համարում են ոչ միայն իրենց համազգի, այլև իրենց Աքեմենյան արքունի ցեղից Հրուդեն կամ Ֆերիտուն դյուցազնի զավակներից և Արասպի որդու՝ Բուրուշասպի կամ Բյուրշասպի որդին, մորն էլ անվանում են Դուղդա (Dughda): Անունը Ավեստայի լեզվով, որոնով նա գրեց իր վարդապետությունը, Զարադուշթրա, Զերաթոշդ,

Զարադուշտ էր, որից՝ նոր պարսկերեն Զերտյուշտ, ըստ մեզ՝ Զրադաշտ, ըստ արևմտյանների՝ Զորոաստր (Zoroastre), որը, ըստ բառի, ստուգաբանվում է որպես «ոսկի աստղ», ըստ ոմանց՝ հատկապես Շնիկ աստղ: Իր դենի գրքերում շատ անգամ կրում է Սպիտաման, այսինքն՝ «ընտիր, գերազանց», մականունը:

Ասումեն, որ Զրադաշտը 30 տարեկանում դուրս եկավ հայրենիքից և գնաց արևելք՝ Պարսկաստանի ու Հնդկաստանի սահմանների մոտ, որտեղ 10 տարի առանձնացավ մի քարայրում, և այնտեղ Որմիզդի ներշնչանքով հին բակտրիական լեզվով գրեց իր հոչակավոր գիրքը՝ «Ավեստա»-ն, որ նմանահունչ հայերեն բառով թարգմանում են «հավաստի բան»: Որոշ ժամանակ անց սրա վրա ավելացան «Զանդ» անվանումով մեկնություններ ու ծանոթություններ, որի պատճառով անվանվեց «Ավեստա» և «Զանդ»: Զանդ անունը տրվում է նաև պահլավերեն թարգմանությանը՝ իբրև բնագրի մեկնություն, որից էլ՝ «Զանդ-Ավեստա» անվանումը, որ ճիշտ է, եթե սրանով իմացվի միայն պահլավերեն թարգմանությունը:

Արդ, ըստ արևմուտքի հեղինակների, «Ավեստան» պարունակում էր 2000000 տող: Այսժմ կլինի 200000 տող՝ բաժանված 21 նասքի (գրքի): «Ավեստա»-ի այն մասը, որ թվում է ավելի հին, քան մյուսները, կոչվում է «Գաթա», ինչը թարգմանվում է «երգ, աղոթք»: Այս գրքի մեծ մասը կրոնական և խրատական է, բարոյաբանական ու աղոթական: Բովանդակում էր նաև աստղերին, բժշկությանը, հմայությանն ու այլ բաների վերաբերող ճառեր, ինչպես նաև նրա վարքը և այս գիրքը բաների Որմիզդից ընդունելու պատմությունը: Բայց այս բոլոր գրվածքները կորել են կամ Ալեքսանդր Մակեդոնացու ատելությամբ կրակը ձգվելով՝ ոչնչացվել: Մնացել է միայն Արտաշիր Սասանյանի ժամանակ Թանսար մոգպետի ձեռքով և հատուկ լեզվով գրածը, որ հույժ նման է հին պարսկերենին՝ «Վենտիտատ» կամ «Վանտիտատ», հնում՝ «ՎԻտայեվոտադեմ», ինչը նշանակում է «տրված ընդդեմ դևերի», պահլավերեն՝ Ճավիտ-շետա-տատ: Գրքին տված «Յասնա» կամ «Իզաշնե» անվանումը նշանակում է «պաշտամունքների գիրք», իսկ յաշդ-երը այլևայլ դիքերի համար ասվող շարականներ կամ օրհներգություններ են:

Մի նաքսի նասն էլ «Վիսբերետ»-ն է: «Վենտիտատա յասնա»-ն և «Վիսբերետը»-ը միասին անվանվում են «Վենտիտատ-Սատե»: Սրանք մեկնությամբ հանդերձ հնուց թարգմանված են պահլավերեն: Կորսված մի նասքի պարունակությունն էլ ամփոփված է թվում «Պունտահիշ» անունով մատյանի մեջ, որում խոսվում է արարչագործության մասին: Մեկնաբանություններ կան նաև ֆրասի լեզվով, որ կոչվում են «Բազենետ», որոնցից մեկն էլ կոչվում է «Մինոխրետ»: Թարգմանություններ են եղել նաև նոր պարսկերենով, ինչպես՝ «Զերտյուշթ-Նամե»-ն, որ Զրադաշտի տաղաչափված (չափածո) վարքն ու օրենքն է՝ շարադրված 1227 թ . : Նշանավոր է նաև Ներիոզենկ անունով մեկի կատարած սանսկրիտ թարգմանությունը: Այս կրոնի վերաբերյալ կան նաև հնդիկնեչրի Կյուճարադ նահանգի լեզվովայլ գրվածքներ, որոնք եվրոպացի գիտնականների մոտ շատ հարգի են: Մեկ այլ նշանավոր գիրք է «Խուրտաե-ավաստա» կոչվածը, որը աշխարհիկների համար ծառայում է իբրև «Մաշտոց» կամ աղոթագիրք և փոքր է կոչվում բուն «Ավեստա»-ի համեմատությամբ . հորինված է համարվում Արտաշիրի որդու՝ Շապուհի ժամանակներում:

Գիրքը կարգավորելուց հետո Զրադաշտը այն տանում է Բակտրիայի Պահլ մայրաքաղաքը՝ Դարեհի հոր՝ Վշտասպ թագավորի մոտ, և բացատրելով ընդունել է տալիս նախ արքունիքում, ապա՝ հպատակների մեջ: Կանգնեցնում են բազում ատրուշաններ կամ հրատներ, ինչպես անվանում են մեր հեղինակները . դրանք քարեղեն սեղաններ կամ բագիններ են՝ վրան փոքրիկ փոս, որի մեջ վառում ու միշտ վառ էին պահում կրակը: Պարսիկները դրանք կոչել են ազերկյահ կամ աթաշկյահ կամ աթեշկետե կրակարան: Դրանք դրվում էին բացօթյա, երբեմն չորս կողմը պատով փակված, բայց առանց ձեղունի, ինչպես պատշաճ էր միշտ ծուխ ու մուխ արձակող բագինին, մանավանդ որ հին ժամանակներում բոլոր ազգերի պաշտամունքի վայրերն էլ բաց և բարձր տեղերում էին: Կային շարժական, նաև արծաթե բագիններ, որ պատերազմի ու հանդսությունների ժամանակ տանում էին զորքի կամ մարդկանց բազմության հետ:

Զրադաշտի աղանդը շատ և շուտ տարածվեց արևելքում՝ մինչև Հնդկաստան ու Չինաստան: Բայց այս երկու մեծ երկրներում գրեթե միևնույն ժամանակ

հանդես էին եկել մեկական մեծ աղանդապետներ ևս՝ Կոնֆուցիոսը և Բրահման, ու քարոզել էին նոր կրոններ, որոնց հետևողները շատ ընդդիմացան Զրադաշտին: Աղանդը առավել անարգել մտավ արևմուտք, որը նվաճել էին պարսիկները: Սակայն աղանդապետը այս հաջողությունը տեսնել չկարողացավ,քանի որ մոտավորապես Դարեհի գահակալության տարում մեռավ կամ սպանվեց Վշատսպի հետ սկյութների ու թուրանցիների դեմ պատերազմելիս:

Հավանաբար այս ժամանակներում՝ Տիգրանի ու Կյուրոսի մահից հետո, երբ երկիրը նվաճվեց պարսիկների կողմից, Զրադաշտի աղանդը մտել է նաև Հայաստան կամ նորոգվել է: Բայց արժանի է հիշելու, որ ըստ հույների՝ այս ժամանակներում էր ապրել մի անվանի հայ մոգ, որին հիշատակեցինք Արայի ու առլեզների առիթով: Շատերն են հիշատակում այս մոգին, բայց այլևայլ անձնավորությամբ ու ժամանակով: Ոմանք նույն են համարում Արմենիոս կոչվածին և Պամփյուլացուն, ոմանք՝ սրանցից էլ տարբեր, Կտեսիաստեոսի հիշատակածից էլ: Առնոբիոսը հայ Զրադաշտին անվանում է Ոստանի (Վստամի՞) թոռ: Պլինիուսը այս անունով, որը, թվում է, ունր վարդապետական կամ սրբազան մի նշանակություն, նաև ուրիշներին է հիշատակում: Պլինիուսը այսպիսի մեկին հիշատակում է որպես Քսերքսեսի ժամանակակից ու Զրադաշտի գրքերի մեկնիչ, մեկ այլ Ոստանեսի էլ՝ որպես Ալեքսանդրի ուղեկից: Սույն հեղինակը (Պլինիուսը) հիշատակում է նաև հայկական անվանն ու ազգին մերձավոր յալ մոգերի, ինչպես՝ Զարատին և Ապուսկորին (՞)՝ ազգությամբ մար, Մարմար և Արաբանդիփո՞կ (Երվա՞նդ) Բաբելացիներին, Տարմենդ Ասորեստանցուն և անվանի Զրադաշտից հին և նրա ուսուցիչ ումն Ազոնակի կամ Ազոնակսի, որին բանասերներից ոմանք համարում են Սեմի կամ Եբերի աշակերտ: Մեկն էլ բուն անունը համարում է Նոյակ: Կարո՞ղ էր արդյոք մեկն էլ Ասքանազ ասել, որ Հաբեթի թոռն է: Բայս այս քիչ կամ շատ ենթադրական բաները թողնելով՝ մի փոքր էլ քննենք Զրադաշտի կամ մոգերի հավատքը՝ առանց քրքրելու նույնիսկ պարսից նոր մոգերի անիմաբան կարծիքները:

Հույների մեջ առաջինը նրանց պատմահայր Հերոդոտոսն է փոքր-ինչ գրել պարսկական այս կրոնի մասին: Ավելի երկար գրել է Թեոպոմպոսը, բայց նրա գրածը կորել է: Իսկ մեր վերոհիշյալ դաստիր գրողները (Եզնիկ, Եղիշե և այլք),

ավելի մոտ լինելով Զրադաշտի նորոգված աղանդին հետևողներին, Սասանյանների օրոք բավական ստուգությամբ են այն ծանուցում: Իբր աշխարհի արարչությունից առաջ կար իբրև թե անձնավոր մեկը՝ Զարվանա-Աքարանան (անսահման ժամանակը), որ, ըստ մեր ազգակիցների, Զրվանն է: Եվ փափագում էր մի որդի ունենալ ու դրա համար հազար տարի հաշտ էր առնում, այսինքն նվերներ էր պատարագ անում կամ ընծայում: Ո՞ւմ և ի՞նչ, ինչպես ծաղրելով հարցնում են Եզնիկը և մեր ու օտար ուրիշ հայրեր: Վերջապես Զրվանը խեղեփներ (երկվորյակներ) է հղանում մեկին՝ իր փափագների համար, մեկին էլ՝ իր տարակուսանքների . և առաջինը սա է լույս աշխարհ գալիս (ինչպե՞ս)՝ գարշահոտ, տգեղ, դժգույն մեկը, որ «Ավեստա»-ի լեզվով կոչվում է Ահրոմայինու, որից նոր պարսկերենում կոչվում է Ահարեմեն, Հարաման, Ահրիմեն, Հարիման, Խարաման և այլն: Իբրև այսպես կոչվելու պատճառ՝ Եզնիկն ասում է . «ՋԽարամանի անուն յանձին կրելոյ՝ առ ի յարեւէ զարեգակնատենչիկսն արկանելոյ, ուստի և զանունն իսկ զԽարամանոյ առ . նոյնպէս և Սատանայ անուն՝ ոչ բնութեան ինչ անուն՝ այլ բարուց»: Քիչ անց ծնվում է լուսավոր և անուշահոտ որդին՝ Որմիզդը, որ ստեղծում է երկինքն ու երկիրը և ինչ որ այնտեղ կա: Նրան նախանձելով Ահիրմանը, ընդհակառակը, ստեղծում է չար էակներ, ինչպես՝ հրեշտակների դեմ՝ դևեր, ընտանի կենդանիների դեմ՝ գազաններ, լույսի դեմ՝ խավար, առողջության դեմ՝ հիվանդություն, կյանքի փոխարեն՝ մահ, և այլն, և այլն:

Այսպես տարբեր անձերից կամ սկզբունքներից է ծագում հավատքի երկարմատ, այսինքն՝ բարիի և չարի հակառակության սկզբունքը, ինչը երևացել է նաև այլ կրոններում: Բայց Զրադաշտի կրոնում Որմիզդը համարվում է մեծ և պաշտելի աստված, Ահրիմանը՝ մի պարզ հակառակություն, որին հետագայում զանդիկներն ու մանիքեականները հռչակեցին հավասարազոր հակառակորդ, ինչի պատճառով ատելի դարձան զարդաշտականներին, ինչպես Եզնիկն էլ ասում է . «Ընդէ՞ր ատիցեն մոգք զՋանդիկս»: «Զգոն» գրքի հեղինակն էլ հարցնում է . «Ո՞ տացէ զհատուցումն վարձուց մանկան Խաւարի՝ Զնադիկ աղանդին՝ որք են Մանիքեցիքն»: Մոգերի ու մազդեզականների մեծ ջանքն էր՝ ատել Ահրիմանին և պնդել, թե իրենք միաստվածական են՝ միայն Որմիզդին ճանաչելով իբրև մեծ աստված:

Յատուկ Պոէմ

Ճիշտ է, որ «Ավեստա»-ի մեջ բազմաստվածության որոշակի նշան չկա, որը չկա նաև նրա մեկնիչների մոտ: Սակայն գոնե նրանց հաջորդները կամ նորերը ցույց են տալիս աստվածակերպ էակներ կամ զորություններ, որոնց գլխավոր կարող է համարվել Հոնավարը կամ Հունավարը, Հոնովերը, Ահունավարը և, ըստ «Ավեստա»-ի, Ահունա-վայրիան, որ աստվածային (խոսք) էր և եթե ոչ անձնավոր, ապա գոնե դիմավոր՝ տարորոշված աստվածային խոսքից, որ կոչվում էր Մաթրա: Այս Հոնավար արարաչագործ խոսքով Որմիզդը հերքել է Ահրիմանին: Ոմանք սա համարում են Որմիզդի մի պարզ մակդիրը: Բայց Սասանյանների օրոք Միհրի աստվածությունը անտարակույս է, ինչպես տեսանք, նաև հայերի մեջ . նույնը վերաբերում է նաև նրանց Անահիտին:

Եթե ոչ աստված, ապա աստվածազան կամ գերագույն ոգիները մոգերի գրվածքներում նշված են իբրև Ամիզդի մերձավորներ ու պաշտոնատարներ՝ կոչված Ամշասբանդ կամ Էմշասփենտ, Էմհուսփենտ, «Ավեստա»-ի լեզվով՝ Ամեշա-Սբենդա, որ թարգմանվում է «անմահ-բարերարներ», որոնք վեցին էին: Որմիզդին էլ մեկտեղ առած՝ ասվում են յոթը և համապատասխանում են հրեաների և քրիստոնյաների հրեշտակապետերին:

1. Բահման կամ Պեհմեն, հին ձևով՝ Վոհու-Մանո, որ թարգմանվում է «բարի միտք», ամեն բանի խնամակալ, հոգիներ վերբերող է: Սրան էին նվիրված մայիս ամիսը, ամիսների 2-րդ օրը և շուշան ծաղիկը:

2. Արտապահիշդ, Աշավահիշդա, որ նշանակում է «սուրբ կամ վեհագույն, աշխարհի լույս, բարի օրենք» և այլն: Սրան էին նվիրված օգոստոս ամիսը, կրակի պահպանությունը, ամսի 9-րդ օրը, մերզենգյուշ ծաղիկը (Mayorana, մշտիկ):

3. Շահրիվար, Շեհրիյվեր, ըստ հների՝ Խշադրա-Վայրիյա, որ մեծ թագավոր է, աշխարհի մեծությունների՝ բովերի, լեռների տեսուչ: Նրան էին նվիրված 10-րդ (դեկտեմբեր) ամիսը, ամիսների 4-րդ օրը, ռեհան ծաղիկը:

4. Սբենդարմատ կամ Իսֆենտարմատ (տե՛ս Սպանդարամետ), Սբանդա-Արմաիդի, որ նշանակում է «սրտի ազնվություն, սրտեր քաղցրացնող» . Անասունների խնամակալ է: Նրան էին նվիրված 5-րդ ամիսը

(հունիս), ամիսների 5-րդ օրը, ուռենի ծառը . սա միայն հրեշտակուհի էր համարվում՝ իբրև Որմիզդի դուստր:

5. Խորտատ կամ Հաուրվադատ, որ կենսատու է, ժամանակի վարիչ, երկրի բույսերի և ջրերի խնամակալ: Նրան էին նվիրված 7-րդ ամիսը (սեպտեմբեր), ամիսների 6-րդ օրը և շուշան ծաղիկը:

6. Ամերտատ կամ Ամարտատ, որը անմահատուր է կամ մահը դյուրացնող, ծաղիկներ ու պտուղներ խնամող: Նրան էին նվիրված ամսի 7-րդ օրը և ջամբա (՞) ծաղիկը:

Այս գերագույն ոգիներից կամ հրեշտակապետերից վար, իհարկե, պիտի լիներ նաև հրեշտակների (ֆերիշդե) մի դաս, որոնք սովորաբար կոչվում են իզետ («ազատ») և, ըստ «Ավեստա»-ի, Յազադա, որ նշանակում է «աստվածային, զոհաբերությամբ պատվելի»: Յաշդ են կոչվում նաև զոհարարության սպասքը, որից է և մեր լեզվում հաշտ-ը . սանսկրիտում յաճատ և յաշդավիա նշանակում են այն, ինչ-որ մեզանում, ըստ պարսկերենի, հաշտ-ը՝ «զոհ»: Հիշատակվում են ավելի քան 40 ազատներ և 24 կամ 28 գլխավորները, որոնք համարվում են խնամող կամ ամսվա օրերի պահապան, ոմանք՝ երկու օրերի, ինչպես մի քանի օրերի պահապան էին էմշասբենտները:

Այստեղ կարգենք ամիսների անունները և դրանց ընթացքում կատարված տոները, ապա՝ այդ ամսվա օրերի պահապանների անունները:

1 . Ազուր, որը, ըստ մեզ, արեգն է՝ մարտը . 9-րդ օրը կատարվում էր կրակի ու ատրուշանների տոն և կոչվում էր ազուրական:

2 . Տայ կամ խոռեմ, խյուրրեմ (աւեկան, ապրիլ), որ նշանակում է «զվարթություն» . 8-րդ օրը՝ խյուրեմ-րուզ, տոնական էր:

3 . Բահման, պեհմեն (մարերի, մայիս) . 2-րդ օրը պեհմանրուզն էր՝ ուտելիքի, մսի, պտղի տոն:

4 . Սպանդարմատ (մարգաց, հունիս) . 17-րդ օրը վնասակար բաները (կարիճներին և այլն) ջնջելու տոն էր:

5 . Ֆերվերտիյն, որին նմանահունչ է նաև հայոց հրորտից ամիսը, ինչպես գրվում է հին օրինակներում, իսկ նորերում՝ հրոտից (հուլիս) . 19-րդ օրը նոր զգեստ կտրելու, ոչխարները մաքրելու և այլ գործերի տոն էր:

6 . Էրտիպիհեշտ (նավասարդ, օգոստոս) . 3-րդ օրը կրակին, թագավորներին պատիվ մատուցելու տոն էր:

7 . Խուրտատ (սեպտեմբեր). սրան նման է ամսի հայերեն անունը՝ հոռի՝ առանց տատ հավելվածի, որ կարող էր նշանակել «տուրք», իբրև հոռետուր կամ արևատուր . 6-րդ օրը Աստծուց խնդրանքների և հաջող ամուսնության տոն էր:

8. Տիր (սահմի, հոկտեմբեր) . 13-րդ օրը՝ տիրական, Մինչուչեհրի և էֆրանսիապայի հաշտության տոն և հիշատակ էր, ըստ ոմանց՝ նաև ապրիյզեկյան՝ ջրերի տոն:

9. Մուրտատ (տրե, նոյեմբեր). 17-րդ օրը նունուֆար ծաղիկ քաղելու տոն էր՝ չեմի-նիլուֆեր:

10. Շահրիար կամ Շեհրիյվեր (քաղոց, դեկտեմբեր). 4-րդ օրը՝ շեհրիվարական, Դարեհի ծննդյան հիշատակի օրն էր, 8-րդ օրը՝ խեզան («աշուն»):

11. Միհր (արաց, հունվար) . 15-րդ կամ 20-րդ օրը՝ միհրեկյան կամ մեհիրկյան, բարեկամության, ֆերիտունի (Խորենացու Հրութենը) հաղթությունների հիշատակի և Արտաշիր Սասանյանի թագավորության տոնն էր:

12.Ապան (մեհեկան, փետրվար). 10-րդ օրը Զավի ձեռքով Էֆրասիապայի գահընկեցության հիշատակի օրն էր:

Ավելյաց 5 օրերը «Զերտյուշթնամե» գրքում կոչվում են ֆարվարտեկան: Ուրեմն այլ կարգավորությամբ էր տարվա ամիսների հաջորդականությունը, որ վերջանում էր ֆերվերտին (հրորտից, հուլիս) ամսով, և համաձայն հայոց տոմարի՝ տարեմուտը սկսվում էր նավասարդով: Մեկ անունով փենճի-մազտիյազնան էին կոչվում օրերը, այսինքն՝ «հինգ սրբազաններ», կամ փենճի խուահարան «հինգ քույրեր»: Սրանցից հուրաքանչյուրը հին ու նոր հատուկ անուններով կոչվում էր՝

- Ահունավատ = Աֆերիյն,
- Ասդավատ = Ֆերրուխ («երջանիկ»),
- Էսֆինդամատ = Ֆերրուզ («հաղթական»),
- Վահուխշադրի = Ռամիշդ («վեհ»),
- Վեհիշդուշ կամ Վիհիշդոյիշդ = Տյուրյուտ («ո՛ղջ մնա, մնաս բարով»):

Այս ավելյաց օրերին մոգերը տանիքների վրա քաշքերին հաց ու կերակուր էին նվիրաբերում: Բազմատեսակ խտրական օրերից մեկն էլ ամիսների 14-րդ օրն էր՝ սիրխուրը, որի անունը նշանակում է «սխտորակեր», և որը վնասակար դևերի դեմ է: Թե՛ ամիսների և թե՛ ամսվա օրերի նոր անունները դրվում են Հազկերտի տոմարի նորոգության ժամանակ պահլավերեն կամ ֆարսի լեզվով: Այստեղ կարգում ենք ամիսների յուրաքանչյուր օրվա պահապանների հին ու նոր անունները՝ նրանց պահպանած կամ խնամած բաների նշանակությամբ, նաև հաջող (հ.) և ձախորդ (ձ.) օրերի խտրությամբ:

- հ. Որմիզդ. Անհումա — հաջողություն, նոր շինություններ
- հ. Բահման, Վահուման — մարդկանց, ձիերի, այծերի աճում
- ձ. Արտիպեհեշտ, Անդավիշդ — կրակ
- հ. Շահրիվար, Շադնավին — լեռներ, բովեր
- ձ. Սբանդարմատ, Սաբանտոմոտ — կենդանիներ
- հ. Խուրտատ, Խունտատ — ջրեր, բույսեր
- ձ. Ամարտատ, Ամանտատ — ծառեր և մարգեր
- ձ. Տեբատար (Տինի Բավան ատան) — վաճառք, շինություններ, կերակուր
- ձ. Ատար, Ադուն — կրակի պաշտամունք
- հ. Ապան, Ավան — ջուր, մշակություն
- հ. Խուրշիտ, Խուր կամ Խունտատ — արեգակ
- հ. Մահա կամ Մահ — ունեցվածք, զոբսանք
- հ. Տիր — ամպեր, անձրևներ
- հ. Գոշ — անասուններ
- հ. Տեքմիեհեր Տինի, Բավանմադուն — լեզուներ (72), բարի գործեր
- ձ. Սերոշ, Սարուշ — ուսում, արդարների հոգիների պահապան

- h . Ռաշնե, Ռաշուն, Ռաշնե֊րաստ — իրավունք և արդարություն
- h . Ֆերվարտին — արքայություն, դենի համար հոգացող մարդկանց հոգիներ
- h . Վահրամ, Պեհրամ, Վառահրամ — ուղևորներ
- h . Ռամ — բախտ
- h . Կուվատ, Վատ — հողմեր
- ձ . Տեքտին, Տինի բավանտին — աստված ի՞նքը
- h . Տին — մազդեզական կրոն
- ձ . Աշասանկ, Արտ, Արսասանգ — մուրացիկներ, կրոնավորներ
- h . Ասդատ — երկրի սերմեր
- h . Ասման — երկինք
- ձ . Ձափատ — պտղաբեր ծառեր
- h . Մահրասֆանտ Մանսաբասբանտ — արքայություն
- h . Անիրան — հարսանիք

Այս օրապահ ազատներից զատ՝ մոգերի գրքերում հիշատակվում են նաև ուրիշներն էլ, ոմանք՝ պահպանության կամ ինչ֊որ հատկության նշանակությամբ, ոմանք՝ ոչ, կամ մեզ են անծանոթ, որոնց մեջ երևելիներից մեկը Վանանդը կամ Վենանդն է, որի անունը հիշեցնում է մեր Գողթն գավառի մասը: Այսպես էր կոչվում նաև հարավի պահապան մի աստղ: Ասենք նաև, որ Վանանդըդժոխքի շահապետն ու դատավորն էր: Ազատներից են նաև՝ Հում կամ Հաում՝ աճելիության և ծովի խնամող . Պարզի (Պե՞րճ), որ համարվում է Հոմի ընկերակից կամ համհարզ . Նիրյուշենկ, Նարուշանկ . Ռաղտեսդ, Ռաղատասդ . Դահան, Տահաման՝ հոգեհան հրեշտակ . Հաբդուրենկ՝ Սայլի յոթ աստղերի պահապան . Աղարերաս (՞) . Ղուպարի, Ղարպարի . Խեշասպատ . Հարուտ և Մարուտ (Հարաոդ, Մարաոդ), որոնք ապստամբել են Որմիզդի դեմ և պատժվելով գլխիվայր կախվել Բաբելոնում . Ֆյուրիհունտա, Ֆուրահունտա . Պատրան՝ հողմերի շարժիչ . Պեշդեր կամ Դաշտեր՝ մարդկանց սննդատու . Ռևանպախշ՝ հոգետու՝ հոգեհան Դահմանի հակառակ/ Ղերուդաման, Ղարաոդաման՝ մարդկանց գործերի խնամակալ . Պեհրամ՝ կրակի տեսուչ . Արտվիսուրա, Անահիդա՝ երկնային ջրերի և աղբյուրների պահապան, որ համարվում է իգական, ինչպես և Մանրեսբանտը՝ խելամտության ներշնչողը . Ռուշնի, Ռեշնևասդ՝ մեկ բյուր ընկերներով ճիշտ վարքը հսկող . Հոնվետ,

Օշղվետ, Ֆոհոուխեշեթրե (այս երեքն էլ ուրհիներ են, այսինքն՝ իգական ազատներ):

Սրանցից ոմանք համարվում են հրեշտակապետերի օգնական և կոչվում են նրանց համքյար: Երևելի բոլոր արարածներին էլ հատուկ խնամող կամ հսկող ոգիներ կային . ինչպես՝ արեգակին՝ Խուրշիտը, լուսինին՝ Մաոնհան, երկրին՝ Սպանդարմատը, ջրին՝ Ավան, օդին՝ Կովատը, անձրևներին՝ Դեշտար Տիրը, և այլն, և այլն:

Հիշեցինք, որ բոլոր աստվածազան ոգիներից գերագույնն էր Միհրը, և նրան նվիրված ամիսը, օրը և վեցօրյա տոները միհրական էին . դրանց ժամանակ ներելի էր անգամ պարսից թագավորի (ըստ հույների) մինչև գինովությունը խմելն ու հրապարակավ պարելը, ինչպես բարեկենդանին: Եվ քանի որ այսպիսի օրերը ախորժելի են մարդկանց բազմությանը, բավական է, որ դրանց առիթը՝ Միհրն էլ շատ սիրելի լիներ, նաև ավելի, քան ինքը՝ Որմիզդը, և ոչ միայն Պարսկաստանում և սահմանակից աշխարհներում, այլև արևմուտքում, որտեղ մինչև իսկ հյուսիսային կողմերում գտնվում էին Mithriaques կոչված միհրական պատկերներ, որ (ինչպես հիշատակել ենք) կերպարանավորում են փոյուգիացու կամ հայի գդակով և զգեստով մի երիտասարդի ծունկը դրած մի ցուլի վրա, որին մորթում է . մոտը նույն հագուստով մեկ կամ երկու անձինք են՝ բռնած մեկական ջահ՝ մեկի ծայրը վեր, մյուսինը վար, որ նշանակում են գիշերն ու ցերեկը: Ցուլի մոտ և ներքևում եղած շունը, օձը, կրիան, կարիճը տարվա եղանակների նշաններն են . երբեմն էլ պատկերվում են երկնքի կենդանակամարի նշաններ, արև ու լուսնի մահիկ:

Հույներն էլ ծանոթ և նրանց մեջ ընդունված էին միհրական տոնն ու պաշտամունքը, որ տեսանք, թե ինչպես էր նկարագրում Գրիգոր Աստվածաբանի ճառերի մեկնիչ Նոննոսը: Մեկ ուրիշ մեկնիչ էլ գրում է . "Հեթանոսք՝ զայնոսիկ որ զՄիթրոսի տանջանսն կրէր՝ գրէին զնա որդի մեծին Արամազդայ, ոչ բնութեան՝ այլ կոչմամբ":

Միհրից հետո մոգերի համար մեծապատիվ ազատ էր Տիրը, որի պաշտամունքն էլ հայերիս մեջ հիշատակել ենք, ինչպես նաև քիչ վերը հիշատակեցինք նրան նվիրված ամիսը, օրերը և տոնը:

Յատուկ Պոէմ

Ըստ մոգերի՝ բարերար ոգիներին կամ ազատներին ներհակ՝ կային նաև չար ոգիներ կամ դևեր, ինչպես Որմիզդին՝ Ահրիմանը: Սա կոչվում է նաև Տարուպի և Կանամինո, որը նշանակում է "չարաճճի": Վեց Ամշասփենտներին էլ հակառակներն են՝ Աքումի՝ կռվարար, Անտև կամ Անտար՝ մեղսաոիք, Կավել կամ Սավան՝ բռնաբարող, Դարմատ, Խեռ, Թարիզ կամ Թարիք՝ նախանձոտ, Զարաչ կամ Զարիչ՝ հափշտակող: Ազատներից ամեն մեկին հակառակողն էլ կար, որոնցից հիշատակեք մի քանիսին՝ Աշմուղ կամ Աշեմաոող՝ ստության և աղանդների դև . Ղանճեսդա-Ղանամինու՝ Ահրիմանի համհարզ . Ասֆունճակեր՝ բքաբեր, ամպրոպահույզ . Ասքսանեշ և Ասքանեշ՝ Ժանգահար . Տուշայիմ՝ երեխաներին մոլորեցնող, Բեդիյարահ՝ վշտացնող, Ահարիման՝ երկրի բերքի ապակիչ . Հիշիմտիվ՝ մահաբեր, Սերոշի հակառակորդ . Միհր-Տերուճ՝ ուխտադրուժ և վեց մեծ մեղք . Լաֆիս՝ աղոթողներին շփոթեցնող . Նիազ (նաև հայերեն)՝ ագահություն . Ռասակ՝ նախանձ . Խազամ (հայարեն՝ խազմ)՝ կռիվ . Վարուն՝ արհամարհանք, հպարտություն . Պաղմուճ՝ գանգատ . Պաս՝ համառություն չարիքի մեջ . Դիր՝ թուլություն, հիվանդություն . Նազուշ՝ ճանճիկ դևը, որ հյուսիսային կողմից . Վիզար կամ Վիզարեսո՝ հոգեկապ դև, և այլն: Գլխավոր դևերը, ըստ մեր բառի, կոչվում են տանա, տիվ ուրիշները՝ տերու, ըստ մեզ՝ դրուժան, և տուխս, որ թերևս լինեն մեր թուխերը: Եզնիկը հիշատակում է նաև Մահմի կամ Մահմե մի դևի, որը գիտեր լույսի ստեղծման գաղտնիքը, և "որում՝ ցայժմ պաշտօնեայք այնր քէշի՝ երիցս յամի զոհս մատուցանեն":

Մոգերի աղանդի հոգեղեն էակների կամ պատկերների մի զարմանալի կամ դժվարիմանալի տեսակ են ֆրավաշիները, որոնց հետո անվանել են ֆրաուրվա, ֆերուհեր, որ համարվում են էակների ու հոգիների նախասկիզբ գաղափարներ կամ Աստշու իմացության մտավոր պատկերներ կամ հոգիների հայելիներ՝ նման Պլատոնի կարծած նախաստեղծ հոգիներին, որոնք ժամանակի մի պահի միավորում են մարմինների հետ: Աքեմենյան թագավորների քանդակների վրա (Պերսեպոլիսում) կերպարանավորված են ֆերուհերներ՝ որպես մինչև մեջքի կեսը թագավորի պատկերներ՝ երկու թևերով մի շրջանակի մեջ:

Որքան որ մոգերի սկզբնական կրոնը և պաշտածը միաստվածություն էր և բարիի պաշտամունք, սրա հակառակ իմաստը՝ չարը, այնքան զատեց -հեռացրեց այդ երկու գաղափարները, որ ամենայն չարը հարավեց դիվական,

ամենայն բարին էլ՝ աստվածային: Ըստ այմ՝ տարրերը, մանավանդ գլխավորները՝ հողը, ջուրը, հուրը և հողմը, սրբազան և պատվելի եղան: Երկիրը այնքան սրբազան էր համարվում, որ անվայել էր մահացածներին նրա մեջ թաղելը, այդ պատճառով նրանց գցում էին ծառերի վրա կամ բաց կամ շրջափակված մի տեղ, մինչև որ գազաններն ու թռչունները ուտեին մարմինները, ապա ոսկորները ժողովում էին դախմաներում՝ գերեզմանատեղերում առանց թաղելու: Եվ եթե սխալմամբ թաղված լիներ, այդ տեղը 50 տարի թողնվում էր անգործ ու անմշակ: Ջրի սրբության պատճառով էլ չէին համարձակվում նրանով լվացվել, այլ լվացվում էին գումիզով (կովի մեզով): Այս էր Հազկերտի կամ Միհրներսեհի հրամանով հայերին տրված պատվերը . "Ձեռք՝ առանց կովմիզոյ՝ մի՛ լուասցին": Ասում են, որ Ներոն կայսեր մոտ գնալու համար Տիրիթ Պարթևը այն պատճառով բռնեց ցամաքային երկար ճանապարհը, որ նավագնացությամբ ծովը չպղծի: Իսկ հրի սրբությունը և պաշտամունքը շատ անգամ հիշվեց և հայտնի է մինչ հիմա: Քանդակների մեջ էլ է երևում, ինչ որ նկարագրել են տեսնողները և պատմիչները . ատրուշանի կամ կրակավառ բագինների մոտ կանգնած են երկու պաշտամունքնավար՝ մոգ կամ մուպետ՝ ծնոտները կապած բերանակապ լաչակով կամ կապերտակով (որ շունչները կամ թուքն ու լորձունքը կրակին չդիպչի), որը կոչվում են փանամ կամ փանդամ, պանամ, պադան, փագանքԱյսպես է գրում Ոսկեբերանի՝ Եսայու մեկնության մեր թարգմանիչը . "Այժմէն իսկ ի տօնսն Կապերտակս իմն զերեսօքն պատեն և Փագանս ի բերան, առ մոլութեանն":</i>, կամ գլուխներին դրած խույրի փեշերով են ծածկում բերանները, որ անընդհատ աղոթքներ են մրմնջում, իսկ ձեռքներին բռնում են նռենու կամ հոսու մանր ճյուղերի (թվով 22 կամ 35) տրցակներ, որ կոչվում են պերսամ, իսկ մեր գրքերում՝ բարսմունք, որ, ըստ սմանց, նույնն է, ինչ վարսաման բույսը (Tymus Seryllum), որի ճյուղերն էլ սովորաբար բռնում էին կրակապաշտները: Ինչպես գրված է ս . Հիզտիբուզտի վկայաբանության մեջ, մոգերի գլխավորը կամ նրանցից մեկն էլ ձեռքում ուներ "ուռն, որով հրամայէր", որ մի փայտե գավազան էր՝ իշխանության նշանակ՝ կոչված իսամ կամ էսման: Սույն վկայաբանության մեջ կրակի մոտ մոգերի կանգնելու կերպը կոչվում է յառակի կալ, որը թերևս նշանակում է "բերանը կապած կանգնել": Հազկերտը հրամայում էր, որ հայերը այս բերանակապը կրեին նաև խմոր թխելու ժամանակ . "Հայսք՝ առանց փանամի մի՛ զանգցին": Դարձյալ ի պատիվ կրակի՝ հրամայվում էր "Ծիրտք և քակորք ի կրակ մի՛ եկեսցեն": Այրված-մաշված

կրակի մնացորդն անգամ՝ մոխիրը, սրբազանացված էր . պետք էր ժողովել ու լցնել մոխրանոցներում, որոնք յոթ մեծամեծ ատրուշանների կամ կրակատների մեջ էին, և պաշտամունքավարներից ճշտությամբ պահանջում էին մոխրի քանակը . սա էր Եղիշեի գրքում հիշատակված մոխրաչափ կարգը: Նույն հրամաններում հիշատակվում է նաև կապճաթիվ կարգ, որ մի որոշված չափով մանր ճիճուներ, մրջյուններ, գորտեր և այլն ժողովելն էր իբրև Ահրիմանի կողմից ստեղծված պիղծ (խարֆասդար) կենդանիներ, և դրանց ջնջելը կամ մոգպետին ուղարկելը, որ ապահով լինի, թե կրակի մեջ չեն գցվել:

Կրակի պաշտամունքի հանդիսավոր ժամերը օրվա հինգ պահերն էին՝ ըստ պարսիկների՝ կյահ: Իսկ կրակի ազնվագույն նվերն էր հոման, ըստ հնդիկների՝ սոման, որ, ըստ ոմանց, համհամ կամ համիմ անուշահոտ ողկույզներ է բերում և հյութ: Այս հյութից հունցված կտորներ նետում են կրակի մեջ: Ըստ բուսաբանների՝ բույսի հատուկ անունն է Sarcostema viminalis: Կրակին կենդանիների զոհաբերություն չէր լինում, բայց բոլոր ուտելի կենդանիներն էլ հարկ էր նախ նվիրել նրան՝ իբր սրբագործելու համար և ապա մորթել և ուտել: Այս է «յազել» կոչվածը (Եղիշեի գրքում) և պատվիրվածը . "Պատրուճակք մի մեռցին անյագ, եթէ յօդեաց իցէ և եթէ յայծեաց և եթէ յարջառոց, և եթէ ի հաւուց և եթէ ի խոզաց": Զոհաբերված և նվիրաբերված միսը կոչվում էր միյարտա (մկո՞ւրտ): Մի սովորական նվեր էլ բաղարջ հացի մանր նկանակն էր, որը կոչվում էր տարուն կամ տարանոնո: Վերոհիշյալ ս . Աստվածատուրի (Հիզտիբուզտի) վկայաբանության մեջ հիշատակվում է նաև կրակին աղտեզ զոհեր մատուցելը, որը ինչ է նշանակում՝ չգիտեմ: Զոհելը և աղոթելը, ըստ մազդեզականների, միանշանակ կոչվում էր յազ և յազել:

Այսքանը բավական համարենք՝ որպես ծանոթություն Զրադաշտի և մոգերի կրոնին, որ դեռ շատ ու շատ ավանդություններ և վարդապետություններ ուներ՝ իրարից տարբեր և շատ կամ քիչ: Մեր Եղիշե վարդապետը իր ժամանակ՝ 5-րդ դարում, ասում է . «Հինգ կեշտք են՝ որ գրաւեալ ունին զամենայն օրէնս մոգութեան», և դրանք են նախ՝ ընդհանուր զրադաշտական կրոնը, ապա ամպարտքաշը, բոզպայիտը, պալհավիկն ու պարսկադենը: Հայտնի է, որ վերջիններս ավելի նոր ժամանակների աղանդներ էին՝ մեկը՝ պարթևների, մյուսը Սասանյանների տերության օրոք ընդունված, որոնց զանազանությունը և

հավելվածը մեզ շատ ծանոթ չեն ու մեր նպատակին անհրաժեշտ չեն: Եղիշեն ավելացնում է, թե այս հինգից զատ՝ «է՛ միւս եւս այլ վեցերորդ, զոր Պետմոգն կոչեն», և ով որ այս բոլոր աղանդների կամ մասերի հավատին հմուտ էր, կոչվում էր համակդեն , այսինքն՝ ամենահավատ: Այսպիսին էր այն մոգպետը, որին բանտարգելության և փորձությունների հանձնվեցին ս . Ղևոնդյանները, որոնց շնորհիվ նա ընդունեց քրիստոնեությունը և կատարյալ հավատացող ու սրբերին պսակակից դարձավ նրանցից առաջ: Բառից հայտնի է, որ մոգպետ կամ մյուպետ նշանակում է «մոգերի գլխավոր», ինչը 5-րդ դարում համապատասխանում էր մեր եպիսկոպոսին: Բայց հետզհետե այդ անվան կարևորությունը պակասում է, և այն այժմ նշանակում է «քահանա», որը 5-րդ դարում կոչվում էր մոգ:

Դիտելի է, որ «Ավեստա»-ում քահանային կոչում են աթարվան և ոչ երբեք մոգ: Այս գրքում վարդապետին անվանում են աեթրաբահիդի, որից էլ կրճատվելով դարձել է հերպատ՝ «վարդապետ»: Այժմ հերպատները կազմում են քահանաներից ու մովպետներից ստորակարգ մի դաս: Գերագույն մոգպետը կոչվում էր տեսդուրի տեսդուրան, որ բառացի նշանակում է «հզոր ձեռքով (ձեռներեց)», որից էլ թվում է մեր դաստիարակ բառը: Եղիշեի դարում ասվում էր մոգպետաց մոգպետ, ինչպես մեր նախնիների գրքերում գրվում է մովպետան մովպետ: Այս կոչման հետ Եղիշեի գրքում գրված է նաև ռատ, ինչը ոմանք մարդու հատուկ անուն են կարծել, մինչդեռ նշանակում է «տեր, գիտուն, մեծ»:

Մոգերի զգեստը լիովին սպիտակ պատմուճան է և կոչվում է սադրա: Մեջքերին չորս հանգույցով գոտի է (քուստի), գլուխներին՝ հայկական կամ փռյուգիական խույր կամ գդակ՝ երկար ականջակալներով կամ փեշերով՝ բերանը դրանցով ծածկելու համար: Մոգպետների խույրն ավելի ուղիղ է, իսկ ձեռքներին բռնածը՝ ուռենին և բարսմունքը, արդեն հիշատակեցինք:

Հարևանցի մի խոս էլ ասենք նաև մարդկանց ու արարչության վերաբերյալ մոգերի կարծիքի մասին, ինչը գուցե մեր հին հայերին էլ ինչ-որ ժամանակ ընդունելի եղած լինի, թեև շատ արտառոց է: Ամշասբանդներից հետո և բոլոր այլ արարածներից առաջ եղել է, կամ Որմիզդը ստեղծել է Ապուտատ կոչված մի ցուլ, որին սպանել է նախանձող Ահրիմանը: Բայց Որմիզդը նրա ավիշից

գոյացնում է բույսերն ու կենդանիներին, նաև առաջին մարդուն՝ անվանված Քեյումորդս կամ Քեյյումերս . սրան էլ է չարը սպանում: Իսկ Որմիզդը նրանից էլ ստեղծում է մի այր ու մի կին՝ Մեշիա ու Մեշիանա, ինչպես Ադամ ու Եվա, որոնք դառնում են մարդկության նախածնողները: Այսպիսի ծագման պատճառով ցուլը, մանավանդ սպիտակը մեծ պատիվ ունի մոգերի ու նաև հայերիս մեջ, ինչը հայտնի են դարձնում ՏՐդատի և նրա հոր՝ Խոսրովի արած զոհաբերությունները և նվիրաբերությունները իրենց չաստվածներին: Եվ գիտուններին թվում է, թե Նինվեի նորագյուտ ավերակների մեջ գտնված մեծամեծ քարեղեն ցուլ-առյուծի և մարդու միացյալ արձանները այս նախաստեղծ ցուլ կենդանուն վերաբերող ավանդության պատճառով են կանգնած արքունիքի դռների և պարիսպների մոտ:

Մարդու վախճանի մասին ավելի ճիշտ կարծիք ունեին մոգերը՝ ընդունելով հանդերձյալ մի կյանք՝ բարիներինը՝ արքայություն, չարերինը՝ դժոխք, որ կոչվում է Տուզախ: Այս երկուսի միջև կա Չինևատ կոչված մի կամուրջ, որով պիտի անցնեն արքայություն գնացողները: Եվ որպեսզի Ահրիմանը նրանց վրա չհարձակվի, այնտեղ պահապան է կանգնում մի մեծ և ահավոր շուն՝ Ցռիակ-Կուաշ անունով (թերևս, ըստ հայերեն ցռուկ բառի, «շան դուն»չ նշանակությամբ): Արքայությունը կոչվում է Ահուվահիսդա, այսինքն՝ «ազնիվ բնակարան»: Այն երեք կարգ կամ աստիճան է՝ իբրև երկնքի երկինքներ: Առաջինը՝ Համիստան-պեհիշդը, բարձրանում է երկրից մինչև աստղերը . երկրորդը՝ Մահ-բիա-պեհիշդը՝ աստղերից մինչև արեգակը, երրորդը պահլավերեն կոչվում է Կարո-տմանա, որ նշանակում է «երգերի տուն», նոր պարսկերեն՝ Քարազման: Բուն արքահարանը Որմիզդի բնակարանն է; նա բազմում է Վեհեշդեմ գահին՝ Հարա-Պերեզայիդի սրբազան և բարձր լեռան գագաթին, որից՝ կովկասյան ու պարսկական Էլբրուս լեռան այժմ ծանոթ անունը:

Պեյմեն հրեշտակապետը արդարների հոգիներին առաջնորդում և անվտանգ հասցնում է արքայություն . ընդհակառակը, մեղավորները, այդ կամուրջի վրա տատանվելով, գլորվում են ներքև՝ դժոխքի մեջ: Իսկ միջին հոգիները, որոնց բարին ու չարը հավասար են, մնում են վերոհիշյալ Համիստան-պեհիշդ կայանում: Մեռյալների հոգիների համար սահմանված են աղոթք ու աղոթքի

չափ և աղաչանք Դահման հոգեհան հրեշտակին, որի անունով էլ կոչվում են ննջեցյալներին վերաբերող աղոթքները: Սովորական աղոթքն է աֆրինը, իսկ գովաբանականաը՝ նյայիշը: Մեծամեծ մեղքերը կոչվում են դանաֆուր: Մեղքերի քավության գլխավոր ապաշխարանքը վնասակար ճիճուներ ու գեռուններ սպանել-ջնջելն է: Աշխարհի վերջը պիտի լինի երրորդ հազմարայակից հետո, այսինքն՝ Զրադաշտից 3000 տարի անց, երբ պիտի երևան Հոշետերպամի և Հոշետերմահի (ինչպես Ենովք և Եղիա) հրաշագործները՝ մարդկանց բարի վարք քարոզելու համար: Նրանցից հետո Իրան երկրից՝ Գանսեից (Գանձա՞կ), պիտի գա Սերխոշը՝ Զրադաշտի քաջ հետևորդը, և հաղթելով Ահրիմանին՝ 4-րդ հազարամյակը պիտի սկսի մեռյալների հարությամբ: Ինչպես պիտի լինի ֆրաշաքարդը (հրաշակե՞րտ)՝ հարությունը՝ Զրադաշտն ինքն է հարցրել Որմիզդին, և սա պատասխանել է . «Ինչպես ցորենի հատը, որ ընկնում է հողի մեջ, բուսնում և աճում է, այնպես էլ երկիրս նորոգված պիտի դուրս բերի ոսկորները, արյունը և կյանքը, ինչպես որ էին առաջ»: Սերխոշը պիտի մարդկանց դատի . անմաքուրներին՝ համառոտ, բայց սաստիկ կերպով պիտի մաքրի-քավի, մեծ մեղավորներին, որոնք կոչվում են դարվատ կամ դարվանտ, պիտի դատապարտի: Արդարների և մեղավորների՝ մեծ լացով և կոծով բաժանումից հետո երեք օր ու երեք գիշեր ահավոր հրդեհ պիտի լինի, որ քարերն ու մետաղներն էլ հալեցնի, մեղավորներն ու դևերին էլ: Այդ օրերից հետո երկիրը պիտի երևա մաքրված, նորոգված: Մաքուր մարդիկ էլ պայծառացած պիտի ապրեն 3000 տարի՝ կերակուրի կարոտ չլինելով, խմելով միայն կենսատու հոմ ծառի հյութը կամ Հետյավեշ ցուլից բխածը: Այդքան տարիներից հետո պիտի լրանա աշխարհիս 10000-ամյա ժամանակը: Ի՞նչ պիտի լինի դրանից հետո: Կարծում եմ՝ այժմ մոգերն էլ չգիտեն: Բայց հին հույն հեղինակ Թեոպոմպոսը, որ մանրամասն գրել էր Զրադաշտի վարքն ու վարդապետությունը (ներկայումս կորած, բայց Պլուտարքոսի կողմից փոքր-ինչ ծանուցված), ասում է, թե դարձրայլ 2000 կամ 12000 պիտի հանգչեն Որմիզդի հետ: Եվ հետո, թվում է, աշխարհը և ժամանակի շրջանը պիտի վերստին նորոգվեն՝ այսպես կտրատելով մոգերի կարճամտության հավիտենականությունը:

Այսպիսի խառնիխուռն հավատ ունեի՞ն և մեր հին հայերը: Հավանական է՝ ունեին, թեև ոչ բոլոր հայերը: Դիվական պաշտամունքների հորդորող կամ

նորոգող Արտաշես Բ-ն ուներ մի տանեցի (Խորենացի, Բ. ԽԸ)՝ «աշակերտ մոգի ուրումն երազահանի, որ յայն սակս Մոգպաշտէ անուն կարդային», որին Երվանդի եղբոր՝ Երվազի փոխարեն քրմապետ կարգեց: Սրանից գուշակվում է մոգերի աղանդի՝ հայերի մեջ ընդունված լինելը: Մոգպաշտե բառն էլ հասկացվում է որպես մոգերի վարդապետությանը հետևող և պարսկերեն մողբաշղի է: Պատմությունը վկայում է, ինչպես առաջ հիշատակեցինք, որ երբ Արտաշիր Սասանյանը նվաճեց Հայաստանը, կրակապաշտությունը մտցերց ոչ իբրև նոր կրոն, այլ «զՀուրն Որմիզդական որ ի վերայ բագնին որ ի Բագաւան՝ անշէջ հրամայէ լուցանել»:

Բայց թվում է, թե երբ Տրդատը հաղթողաբար վերադարձավ Հայաստան, պարսիկների հետ վռնդեց նաև նրանց պաշտամունքը, գոնե իր սեփական արքունիքի սահմաններից, քանզի նրա հրովարտակների մեջ (եթե համարենք վավերական) ո՛չ կրակի հիշատակություն կա, ո՛չ էլ լուսատուների պաշտամունքի: